

առնացի ձայնը, վերջապես ամեն բան Սուրենի ճաշակին յարմար չէին, մանաւանդ որ ինք անհամեմատ գեղեցկութեամբ կին մը կ'որսնցնէին ի վեր ամեն կնոջ երեսին անտարբեր էր, եւ միեւնոյն եպիսկոպոսին յափշտակութիւնը չունեցաւ եւ իրեն այնպէս թուեցաւ, որ Զահինայ նաեւ իրեն համար նոյն զգացմունք ունեցաւ առաջին նայուածքին:

Թերթէ ճաշ մ'ընելէն վերջ, որու մասնակցեցաւ եպիսկոպոսը միայն, Զահինայ հրաւիրեց Կամսարական իշխանը իւր պալատը, որ մէկ-երկու ժամաւ հեռի էր, գեղեցիկ ոսկեկազմ ջորիի վրայ հեծած ինք տառաջէն կը ձիավարէր, երեսունի չափ երիտասարդ թիկնապահք զինք կը շրջապատէին: Հագիւ քառորդ մը ճամփայ ըրին՝ երեւցաւ պալատը իբր թէ օդին մէջ կախուած, ժայռի մը գլուխ կանգնած, ամեն կողմէ տեսանելի բերդ, որ շատ մօտ կը կարծուէր, բայց հոն հասնելու համար այնչափ կիրճերէ, այնչափ նեղ եւ պտոյտ ճամփաներէ, այնքան ելեւէջ պէտք էր ընել, որ իրօք բարձրանալը երկու եւ աւելի ժամ տոնէց: Բաւական ընդարձակ եւ վայելուչ էր ամրոցը, ահաւոր տեսարան մը ժայռերու, գահավէժներու եւ անտառներու կը բացուէր նայողին, եւ հեռուն կ'երեւար արծաթի պէս ծով եւ Կիլիկիոյ ընդարձակ դաշտը:

Զահինայ արթայաձայնէ մեծարեց իւր հիւրը. ինչ-որ պակասութիւն ունէր՝ ամենքը հոգաց. ծառաներ եկան զինք բաղանիս հրաւիրեցին, եւ անտի ելնելէն վերջ բազմախորտիկ ընթրեաց տարին զինքը, ուր հռոմէական ձեւով բաստեռանց վրայ տարածեալ իշխանուհին իրեն կը սպասէր, եւ զինք ես իւր դիմացը նոյնպիսի բազմոցի մը վրայ հրամցուց: Ուրիշ կոչնական չի կար, այլ, որ ամեն բանէ աւելի զարմացուց հայ իշխանը՝ այն էր, որ կնոջ հետք անգամ չէր երեւէր, այլ ծաղկապսակ, նորահաս եւ գեղեցիկ պատանիք կը ծառայէին սեղանին. Արաբիս քաղցրահոտ խունկեր կը բուրէին, զանազան գինիք խաղողի եւարմաւի սեղանը կը զարդարէին, աներեւոյթ եւ մեղկ երաժշտութիւն մը կը նուագէր. վերջապէս ինչ-որ շուայտութիւնը եւ պագշոտութիւնը կրնային ստեղծել՝ ամեն բան Հոն կատարեալ կար: Սուրեն առանց զարմանք յայտնելու կը տեսներ այդ ամենը իբր անտարբեր աչօք, մինչեւ իսկ այդ կնոջ մատռուակը՝ պատանեաց ամենէն գեղեցիկը, որ շարունակ Տիկնոջ գաւաթը կը լցնէր, եւ որ նա անդադար կը խմէր՝ յորդորելով Սուրեն իւր օրինակին հետեւիլ: Վերջապէս ակնարկի ըրաւ, եւ սպասաւորք հեռացան, այն ատեն ըսաւ Զահինայ Սուրենի.

— Իշխան, զիս կը տեսնես այնպէս, ինչպէս եմ միշտ, կրնայի քեզ խաբել քանի մը օր, ծածկել իմ մոլութիւնքս, եւ երբ երէկ ինձ իմացուցին քու գալդ, առաջ այնպէս շարժիլ որոշեցի, որ ծածկեմ քէնէ իմ այս շուայտ կեանքս, բայց վերջը մտածեցի, թէ ո՞րն աւելի լաւ էր. կեղծաւորութիւն, որ մարդկանց մեծ մասին